ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 մարտի 2017 թվականի N 41-Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի 2013թ. փետրվարի 28-ի թիվ 18-Ա որոշմամբ հաստատված կանոնակարգի 9-րդ գլխի պահանջները՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել Սյունիքի մարզի «Վարդավանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ներքին աուդիտի իրականացման արդյունքներով բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ կազմված գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. մարտի 15
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ. մարտի 15-ի
N41-Ա որոշման

Գործողությունների ծրագիր

Առաջարկության համարը	Առաջարկություն	Կարևորության աստիճանը	Հղում հաշվետվությանը	Աուդիտի ենթարկված ստորաբաժանման ղեկավարի պատասխանը	Գործողության իրականացման համար պատասխանատու	Կատարման վերջնաժամկետ
1	Հանրակրթական գործընթացը պատշաճ ապահովելու նպատակով իրականացնել ուսուցիչների վերավորակավորումներ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի:	Հիմնական	Կետ 4.2.1	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	01.09.2017թ.
2	Աշակերտներին դպրոց ընդունելիս առաջնորդվել բացառապես «Հանրակրթության մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով:	Փոքր	Կետ 4.2.2	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	01.04.2017թ.
3	Դասագրքերի կառավարչական հաշվառումը իրականացնել ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. օգոստոսի 21-ի N 752-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու» կարգով նախատեսված պահանջներին համապատասխան: Դասագրքերի հաշվապահական հաշվառումը իրականացնել ՀՀՀՀՀՀՍ 11 ստանդարտի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով ՀՀ Ֆինանսների նախարարության 2015թ. ապրիլի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման կարգը հաստատելու մասին» հրամանով հաստատված դրույթներով:	Միջին	Կետ 4.2.3	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	20.03.2017թ
4	Լիազոր մարմնին հետևել դպրոցի տնօրենի, որպես ղեկավարի իրավունք ունեցող անձի համապատասխանությանը օրենսդրության պահանջներին:	Հիմնական	Կետ 4.2.4	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	Կատարվել է տնօրենի փոփոխություն
5	Աշխատակիցների աշխատանքային պայմանների փոփոխության դեպքերում	Փոքր	Կետ 4.2.5	Առաջարկությունը ընդունվել է,	Նինել Սարգսյան	01.04.2017թ

	ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջների համաձայն նախորոք տեղեկացնել նրանց իրենց աշխատանքային պարտականությունների փոփոխության վերաբերյալ ծանուցագրերի կամ համաձայնագրերի միջոցով:			առարկություն չի եղել		
6	Ինչպես գանձապահի, այնպես էլ այլ աշխատակիցների հետ, որոնց աշխատանքն անմիջականորեն կապված է նյութական արժեքների պահպանության, ընդունման, տեղափոխման կամ օգտագործման հետ, գրավոր կարգով կնքել լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագրեր:	Փոքր	Կետ 4.2.6	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	05.04.2017թ
7	Դրամարկղային գործարքները իրականացնելիս առաջնորդվել ՀՀ «Դրամարկղային գործարքների մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2003թ. հոկտեմբերի 8-ի 1408-Ն «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման պահանջներով:	Միջին	Կետ 4.2.7	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	27.03.2017թ
8	Գույքագրումներն իրականացնել ՀՀ Ֆինանսների նախարարության N 102 «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգի» պահանջներին համապատասխան:	Փոքր	Կետ 4.2.8	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	27.03.2017թ
9	Հաշվի առնելով, որ ուսուցիչների տրանսպորտային տեղափոխությունները չեն ներառվում կազմակերպության կանոնադրական գործունեության շրջանակներում, նրանց վճարված տրանսպորտային փոխհատուցման գումարները անհրաժեշտ է միացնել համախառն եկամտին և հարկել եկամտային հարկով:	Փոքր	Կետ 4.2.9	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	27.03.2017թ
10	Դպրոցի շենքը անվտանգության ապահովման և ուսումնական պրոցեսին հարիր վիճակի բերելու նպատակով՝ ձեռնարկել միջոցառումներ հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:	Հիմնական	Կետ 4.2.10	Առաջարկությունը ընդունվել է, առարկություն չի եղել	Նինել Սարգսյան	01.10.2017թ